«Ծիրակացու ճեմարան»
միջազգային գիտակրթական համալիր

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԲԱՑ ՕԼԻՄՊԻԱԴԱ
2024-2025
Հայոց պատմություն (7-րդ դասարան)

Անուն Ազգանուն _____

Դպրոց _____

Դասարան _____ Խումբ _____

---

1. **Մեծ Հայքի քարտեզի վրա տեղադրեք Այրարատ և Աղձնիք նահանգները և բացատրեք, թե ինչո՞վ են այս նահանգները կարևոր /1 մ./:**

Պատ.՝ Այրարտով էր անցնում Չինաստանն ու Հնդկաստանը Արևմուտքի և Հյուսիսի հետ կապող հիմնական մայրուղիներից մեկը, այստեղ էին գտնվում Հայաստանի մայրաքաղաքների մեծ մասը: Աղձնիքում թագադրվել է Տիգրան Մեծը, այստեղ է կառուցվել Տիգրանակերտ մայրաքաղաքը:

2. **Վանի թագավորության ո՞ր արքան է իր թողած ասուրերեն արձանագրության մեջ իրեն անվանում՝ «մեծ արքա, հզոր արքա, տիեզերքի արքա, Նաիրիի արքա…» /0,5 մ./:**

Պատ.՝ Սարդուրի I

3. **Ո՞ր գետում է մկրտվել Տրդատ III արքան և ու՞մ կողմից /0,5 մ./:**

Պատ.՝ Արածանի, Գրիգոր Լուսավորիչ

4. Ի՞նչ տիտղոս էին կրում Բագրատունի արքաներ Աշոտ II-ը և Գագիկ I-ը /0,5 մ./:

Պատ.՝ Շահնշահ Հայոց

5. Ո՞ր դարն են անվանում «հայ մշակույթի ոսկեդար» և ինչու՞ /0,5 մ./:

Պատ.՝ V դար, ստեղծվել են հայոց գրերը, զարգացել է գիտական միտքը, պատմագրությունը: Ստեղծվել են շատ նշանավոր աշխատություններ: Սկսվել է թարգմանչաց շարժումը:

6. Հայերի մղած նշանավոր ճակատամարտերն ու դրանց թվականները լրացրեք աղյուսակում /3 մ./:

Տիգրանակերտի, Ներսեհապատի, Ավարայրի, Արածանիի, Ձիրավի, Սևանի, Հռանդեայի, Ճարմանայի:

	Ճակատամարտի անվանումը	Տարեթիվը
Հայ-Հռոմեական	Տիգրանակերտ	Ք. ա. 69 թ.
	Արածանի	Ք. ա. 68 թ.
	Հռանդեա	62 թ.
Հայ-պարսկական	Ներսեհապատ	483 թ.
	Ավարայր	451 թ.
	Ձիրավ	371 թ.
	Ճարմանա	483 թ.
Հայ-Արաբական	Սևան	924 թ.

7. Այս արքաները ստացել են մականուններ կամ տիտղոսներ: Լրացրե՛ք դրանք նրանց անվան կողքին՝ նշելով նաև կառավարման տարիները /3 մ./:

Պատ.՝ Աշոտ Երկրորդ Երկաթ (914-928 թթ.)

Խոսրով Երրորդ Կոտակ (330-338 թթ.)

Տիգրան Երկրորդ Մեծ (Ք. ա. 95-55 թթ.)

Աշոտ Երրորդ Ողորմած (953-977 թթ.)

Տրդատ Երրորդ Մեծ (298-330 թթ.)

Արտաշես Առաջին Բարեպաշտ (Ք. ա. 189-160 թթ.)

8. Համապատասխանեցնե՛լ /1 մ./:

1) Եղիշե	ա) «Անաբասիս»
2) Մովսես Խորենացի	բ) «Մատյան ողբերգության»
3) Կորյուն	գ) «Վարդանի և հայոց պատերազմի մասին»
4) Քսենոփոն	դ) «Հայոց պատմություն»
5) Գրիգոր Նարեկացի	ե) «Վարք Մաշտոցի»
	զ) «Տիեզերական պատմություն»

1	2	3	4	5
գ	դ	ե	ա	բ

9. Ե՞րբ և ու՞մ միջև է կնքվել Արտաշատի պայմանագիրը: Ինչու՞ այդ պայմանագրով հայոց արքան զիջեց իր գրաված բոլոր տարածքները՝ բացի Մեծ Հայքի տարածքից /2,5 մ./:

Պատ.՝ Արտաշատի պայմանագիրը կնքվել է Ք. ա. 66 թ.՝ Տիգրան Մեծի և Գնեոս Պոմպեոսի միջև: Ըստ այդ պայմանագրի Տիգրան Մեծը, հօգուտ Հռոմեական Հանրապետության հրաժարվում էր Հայաստանից դուրս կատարած իր բոլոր տարածքներից, քանի որ ռազմաքաղաքական առումով Հայաստանը հայտնվել էր 2 հզոր պետությունների (Հռոմի և Պարթևստանի) միջև, կորցրել էր իր հիմնական դաշնակցին՝ Պոնտոսին, նման պայմաններում կարևոր էր պահպանել Մեծ Հայքի տարածքային ամբողջականությունը և անկախությունը:

10. Ի՞նչ աշխարհիկ և հոգևոր բարեփոխումներ է կատարել Պապ թագավորը (ներկայացնել նվազագույնը 4-ը): Ի՞նչն էր նրա սպանվելու պատճառը /2,5 մ./:

Պատ.՝ բանակի թիվը հասցրել է 90-100.000, դուրս է բերել հայոց եկեղեցին Կեսարիայից ունեցած կախվածությունից, փակել է բազմաթիվ մենաստաններ և կուսանոցներ, սահմանափակել է հայոց եկեղեցու արտոնությունները և եկամտի աղբյուրները: Պապ թագավորը սպանվել է Հռոմի կողմից, քանի որ փորձել է հարաբերություններ հաստատել Պարսկաստանի հետ:

11. Ի՞նչ դասերից էր բաղկացած Սպարտայի հասարակությունը: Ի՞նչ իրավունքներ ունեին նրանցից յուրաքանչյուրը /1 մ./:

Պատ.՝ սպարտացիներ - նրանք կառավարում էին երկիրը, ծառայում էին բանակում: Հելոտներ-նրանք չունեին իրավունքներ, զբաղվում էին հողագործությամբ և անասնապահությամբ, պարտավոր էին իրենց բերքի մեծ մասը տալ սպարտացիներին: Պերիեկներ-Սպարտայի սահմանամերձ շրջանների ազատ բնակիչներն էին, նրանք զբաղվում էին արհեստներով:

12. Ներկայացնել (կարող եք նաև գծագրի տեսքով) հռոմեական հանրապետության պետական կառուցվածքը /1 մ./:

Պատ.՝ Պետության բարձրագույն մարմինը ժողովրդական ժողովն էր, որը ընտրում էր բոլոր պետական պաշտոնյաներին և հրավիրվում էր ամիսը 1-2 անգամ: Մշտապես գործող պետական մարմինը 300 հոգուց բաղկացած Սենատն էր, որը պատերազմ էր հայտարարում և հաշտություն կնքում, նշանակում էր դիկտատորին: Պաշտոնյաներից ավագը կոնսուլն էր, կառավարում էր պետությունը և բանակը: Պրետորները վարում էին դատական գործերը: Քվեստորները հետևում էին հարկերի և մաքսերի հավաքմանը: Էդիլները հետևում էին քաղաքում կարգ ու կանոնին: Ժողովրդական տրիբունները պաշտպանում էին պլեբսի իրավունքները:

13. Ներկայացնել «օստրակիզմի դատարան» հասկացությունը: Ու՞մ կողմից է այն ընդունվել: Ո՞րն էր դրա իմաստը /1 մ./:

Պատ.՝ օստրակիզմի դատարանը ստեղծվել է Կլիսթենեսի կողմից: Ամեն տարի գարնանը ծողովրդական ժողովում ստրատեգները դեմոսին հարցնում էին, թե կա՞ն արդյոք քաղաքացիներ, ովքեր վտանգ են ներկայացնում պետության հանգստության համար: Ժողովի մասնակիցները, գրում էին իրենց կարծիքով նման «վտանգավոր» մարդկանց անունները: Այն մարդը, ում անունը գրում էր մասնակիցների կեսը, 10 տարով Աթենքից վտարվում էր: Այսպես դեմոկրատիան պաշտպանում էր ինքն իրեն:

14. Ե՞րբ է Հռոմում ձևավորվել առաջին եռապետությունը: Ովքե՞ր էին նրա անդամները: Ի՞նչ կապ ունեին նրանք Մեծ Հայքի և հայոց արքա՝ Արտավազդ Բ-ի հետ /2 մ./:

Պատ.՝ Ձևավորվել է Ք. ա. 60 թ., առաջին եռապետության անդամներն էին Հուլիոս Կեսարը, Գնեոս Պոմպեոսը և Մարկոս Կրասոսը: Գնեոս Պոմպեոսը Ք. ա. 66 թ. արշավել է Մեծ Հայք, ապա Տիգրան Մեծի հետ կնքել Արտաշատի հայ-հռոմեական պայմանագիրը: Մարկոս Կրասոսը Ք. ա. 54 թ. արշավել է Արևելք՝ Պարթևստանի դեմ: Հայոց թագավոր Արտավազդ Բ-ն՝ հետևելով Արտաշատի պայմանագրին, նրան խոստացել է տրամադրել զորք, սակայն պարթևական արշավանքի պատճառով չի կարողացել: Արտավազդի արարքը Կրասոսը դիտարկել է որպես «դավաճանություն»: Կրասոսը սպանվել է Ք. ա. 53 թ. Խառանի ճակատամարտում, որտեղ հայ-պարթևական զորքերը ջախջախել են հռոմեական զորքերին: